ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 63-Ա
26 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՆՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՕՐԻՆՎՈՂ ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 676-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի տարածքում, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի շինարարական աշխատանքներ կատարելու հետևանքով հանված և համայնքի կողմից տնօրինվող հողի բերրի շերտի մեկ խորանարդ մետրի ուղղակի վաճառքի գինը սահմանել 2000 Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Կուտակված հողի բերրի շերտի վաճառքն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 676-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Աշխատանքների իրականացման վերահսկողությունը վերապահել վարչական ղեկավարներին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -26 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ.ԱՐՇԱԿՅԱՆ

Վ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կ. ԷԼԲԱԿՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ն.ՄՈՒՇԵՂՅԱՆ

Հ. ՆԱՎՈՅԱՆ

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հ. ՈՍԿԱՆՅԱՆ

Կ. ՍԵՐԳՈՅԱՆ

Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

26 ապրիլի 2022 թվական
գյուղ Ախուրյան